ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 5-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի ս. Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գըտնըվող, Կահիրեի Գալստյան վարժարանի տնօրեն տ. Ներսեհ վրդ. Փապուճյանը և քարոզում «Եւ արար Աստուած զմարդն ըստ պատկերի իւրում» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Սեպտեմբերի 12-ին, կիրակի.—Խաչվերաց.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Վեհափառ Հայրապետը Խաչվերացի խորհրդի հոգևոր նըշանակության մասին:

Երեկոյան, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Թափոր Խաչվերաց-ի՝ Մայր տաճարի շուրջ երիցս պտտմամբ:

*
* *

Սեպտեմբերի 13-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է «հոգեհանգիստ, վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Սեպտեմբերի 14-ին, երեքշաբթի.—Այսօր Կանադայից Մայր Աթոռ է ժամանում Տորոնտո քաղաքի հայոց ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ տ. Ժիրայր վրդ. Թաշճյանը:

Իջման ս. սեղանի առաջ իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, տ. Ժիրայր վրդ. Թաշճյանը Վեհարանում աջահամբույրով ստանում է Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

*
* *

Սեպտեմբերի 16-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, տ. Ներսեհ վրդ. Փապուճյանը մեկնում է Կահիրե՝ իր պաշտոնատեղին:

*
* *

Սեպտեմբերի 19-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան աբեղա Բալիոզյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Սեպտեմբերի 22-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Բուխարեստից Մայր Աթոռ է ժամանում ծանոթ մտավորական Հակոբ Սիրունին՝ որպես Վեհափառ Հայրապետի հյուրը:

*
* *

Սեպտեմբերի 17-ին, ուրբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է այցելությունը ԱՄՆ-ի եկեղեցական երիցական միացյալ եկեղեցու էկումենիկ առաքելության և հարաբերությունների հանձնաժողովի անդամ և էկումենիկ կապերի խորհրդական Նորման Ս. Հորների:

Հարգելի հյուրն այնուհետև լինում է Մայր տաճարում, այցելում հոգևոր ճեմարան, «Էջմիածին» ամսագրի խմբագրություն և Մայր Աթոռի տպարան:

*
* *

Սեպտեմբերի 25-ին, շաբաթ.—Այսօր Ամերիկայի Միացյալ Նահանգներից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում տ. Տիրան արքեպ. Ներսոյանը:

Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո Վեհարանում Հայոց Հայրապետին է ներկայանում տ. Տիրան արքեպիսկոպոսը:

Նույն օրը, ժամը 12-ին, Մայր Աթոռ է այցելում մարշալ Համազասպ Բաբաջանյանը:

Վեհափառ Հայրապետի և բարձրաստիճան զինվորականի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ արտագին մթնոլորտում:

*
* *

Սեպտեմբերի 26-ին, կիրակի.—Տօն է Վարագայ սրբոյ Խաչի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Ժիրայր վրդ. Թաշճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Այլ ինձ բաւ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: